ԻՄ ԸՆԹԵՐՑԱՐԱՆԸ

Աշխատանքային փաթեթ, 2-րդ մաս

2-րդ դասարանի սովորող

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անբան Հուռին, Հովհաննես Թումանյան…….....5

Կացին ախպեր, Հովհաննես Թումանյան……....14

Սուտլիկ Որսկանը, Հովհաննես Թումանյան..……21

Կիկոսի մահը, Հովհաննես Թումանյան ……..……..……28

Ոսկու կարասը, Հովհաննես Թումանյան ……..……...34

Չարի վերջը, Հովհաննես Թումանյան …...…….....41

Թռչնի ձագերը, Տեղեկատվական տեքստ..……52

Արագիլ, Ժողովրդական…….55

Զատիկ, Տեղեկատվական տեքստ……..57

Գետակը, Հովհաննես Թումանյան.....……...61

Ցախավելն ու Բեֆանան, Դոնալդ Բիսեթ.....…….....64

Մթից վախեցող ավտոբուսը, Դոնալդ Բիսեթ……....70

Մանուկն ու ջուրը, Հովհաննես Թումանյան..……...74

Կենդանիների վեճը, Ղազարոս Աղայան ……76

Մեղուն ու մարդը, Ղազարոս Աղայան.....……80

Մեկ և յոթ, Ջաննի Ռոդարի …….84

Աչքերի գանգատը, Ջաննի Ռոդարի ……..……....87

Ցավից էլ օգուտ կա՞, Տեղեկատվական տեքստ ……...89

Ի՜նչ դժվար է թռչելը, Տեղեկատվական տեքստ …….....91

Ավտոմոբիլ, Տեղեկատվական տեքստ..……..93

ԱՆԲԱՆ ՀՈՒՌԻՆ

Հովհաննես Թումանյան

մաս 1-ին

Լինում է, չի լինում մի կնիկ: Էս կնիկը մի աղջիկ է ունենում՝ անունը Հուռի: Մի ծույլ, անշնորհք աղջիկ: Օրը մինչև իրիկուն պարապ-սարապ նստած:

Բանն ինչ կանեմ՝ կեղտոտ է.
Բամբակը կորիզոտ է:
Մաստակ պիտի, որ ծամեմ,
Կըտերը տիտիկ անեմ,
Անցնողին մըտիկ անեմ.
Ուտեմ, խմեմ,
Մըթնի, քընեմ:

Հարևանները անունը դնում են Անբան Հուռի: Ինչ մերն է՝ աղջկանը գովելով ման է գալի, լիդըր գզող, լիդըր մանող, համ խաճող, համ խաճուճը հանող, ձևող-կարող, հունցող-թխող, եփող-թափող, մի խոսքով՝ հուրի-հրեղեն, մատները՝ ոսկի:

մաս 2-րդ

Էս գովասանքը գնում մի երիտասարդ վաճառականի ականջն է ընկնում: Էս երիտասարդ վաճառականն ասում է՝ իմ ուզածն էլ հենց սա է, որ կա: Գլխապատառ գալիս է անբան Հուռիին ուզում է, հետը պսակվում, տանում իրենց տուն: Մի քանի ժամանակից ետը մի տասը-քսան բեռ բամբակ է առնում, տալիս կնկանը, թե՝ գնում եմ հեռու տեղեր առուտուրի, դու էլ էս բամբակը զզի, մանի, գամ, տանեմ ծախեմ, հարստանանք:

Հուռիի հարսանիքը

Անբան Հուռին էլ իրեն համար մաստակ ծամելով ման է գալի: Մի օր էլ գետի ափովն անց կենալիս լսում է, որ գորտերը կըռկըռում են.

- Փե՛փել... Կե՛կել... Փե՛փել... Կե՛կել...

- Վո՜ւյ, աղջի Փեփել, Կեկել,- ձեն է տալի անբան Հուռին,- որ բամբակը բերեմ ձեզ տամ՝ կզզեք...

- Բե՛ր, բե՛ր, բե՛ր...

Անբան Հուռին ուրախանում է: Գնում է, բամբակը կրում, բերում, ածում գետը:

- Դե զզեցե՛ք, մանեցե՛ք: Մի քանի օրից ետ կգամ, մանածը կտանեմ, որ ծախենք:

Գնում է, մի քանի օրից ետ է գալի: Գորտերը էլի կռկռում են.

- Փե՛փել-Կեկել... Փե՛փել-Կեկել...

- Աղչի Փեփե՜լ, Կեկել, դե մանածը բերեք:

Գորտերը շարունակում են կռկռալ, իսկ մանածը չեն բերում: Հուռին մին էլ որ նայում է, աչքովն ընկնում է գետի ափերին ու քարերին փաթաթված կանաչ մուռը:

- Վո՜ւյ,- ասում է,- քոռանամ ես, տե՛ս, հա՛մ զզել ու մանել են, հա՛մ խալիչա են գործել իրենց համար:

Ձեռը ճակատին է դնում, ձեն տալի.

- Դե որ խալիչա եք գործել, մեր բամբակի փողը բերեք:

Ձեն է տալի ու ոտը փոխում է, մտնում ջուրը: Հանկարծ ոտը առնում է մի կոշտ բանի: Հանում է, տեսնում՝ մի կտոր ոսկի: Փեփելին ու Կեկելին շնորհակալություն է ասում, ոսկու կտորը փեշը դնում, գալիս տուն:

Մարդն էլ առուտուրի տեղիցն է գալիս։ Գալիս է տեսնում իրենց թարեքին մի մեծ ոսկու կտոր։

- Ա՛յ կնիկ, էս ի՞նչ ոսկի է։

Թե՝ բա չես ասիլ բամբակը Փեփելի ու Կեկելի վրա ծախեցի. բամբակի փողն է։

Մարդը ո՛նց է ուրախանում, էնպես էլ դուք ուրախանաք։ Զոքանչին հրավիրում է, ընծաներ է տալի, գովում է, շնորհակալություն է ասում, որ էնպես խելոք, շնորհքով, աշխատասեր աղջիկ է մեծացրել։ Քեֆ է սարքում, նստում են քեֆի։

Փեփելն ու Կեկելը

մաս 3-րդ

Զոքանչը խորամանկ կին է լինում։ Իմանում է, թե բանը ինչպես է պատահել. վախենում է փեսեն էլի աղջկանը գործ հանձնի, ու գաղտնիքը բացվի։ Քեֆի լավ ժամանակ մի բզեզ է ներս մտնում ու բըռռացնելով պտտվում սենյակում։ Էս զոքանչը վեր է կենում, գլուխ է տալի բզեզին։ Ասում է.

- Բարո՛վ եկար, մորքո՛ւր ջան, ո՛նց ես. ո՛րտեղ ես, էսքան ժամանակ չես երևում... Ախր քեզ ո՞վ էր ասում էդքան բան անես, որ էդ օրն ընկնես...

Փեսեն մնում է զարմացած։ Ասում է.

- Ա՛յ մեր, խելագարվեցի՞ր, քեզ ի՞նչ պատահեց. էդ բզեզին էդ ի՞նչ ես ասում, մորաքո՞ւրս որն է...

Մորաքույր Բզեզը

Զոքանչը թե.

- Ա՛յ որդի, քեզանից ի՞նչ թաքցնեմ, դու էլ իմ որդին ես։ Չես ասիլ՝ էս բզեզն իմ մորաքույրն է։ Խեղճը շատ աշխատասեր կնիկ էր։ Ամբողջ օրն աշխատում էր, շատ աշխատելուց կուչ եկավ, պստիկացավ, էնքան պստիկացավ, որ դառավ բզեզ։ Մեր ցեղն էսպես է։ Շատ աշխատասեր ենք։ Բայց աշխատելուց պստիկանում, բզեզ ենք դառնում։

Էս որ փեսեն լսում է, վախից քիչ է մնում պռոշը ճաքի, էն է լինում որ էն, արգելում է Հուռիին ձեռն էլ բանի չտա, որ մորքուրի նման բզեզ չդառնա։

Առաջադրանքներ

1. Հեքիաթում նշի՛ր անծանոթ բառերը և առցանց բառարանի օգնությամբ բացատրի՛ր:

2. Փորձի՛ր բացատրել հետևյալ դարձվածքները:

ձայնը գլուխը գցել _____

աչքովն ընկնել _____

ականջն ընկնել _____

մատները ոսկի _____

օրը մինչև իրիկուն _____

ձեռը բան չտալ _____

3. Հեքիաթից գտի՛ր Հուռիին բնութագրող բառերը, մի քանիսն էլ դու ավելացրո՛ւ:

_____

_____

4. **Պատմի՛ր Հուռիի մոր մասին:**

_____

_____

_____

5. **Տեքստից գտի՛ր և լրացրո՛ւ բաց թողնված բառերը:**

Ա) Բանն ինչ կանեմ՝ կեղտոտ է.

(Ի՞նչը) _____ կորիզոտ է:

Բ) (Ո՞վ) _____ էլ իրեն համար մաստակ ծամելով ման է գալի:

Գ) Քեֆի լավ ժամանակ մի (ի՞նչ) _____ է ներս մտնում ու բրոռացնելով (ի՞նչ է անում) _____ սենյակում:

6. **Եթե բզեզը չլիներ, հեքիաթն ինչպե՞ս կավարտվեր: Հորինի՛ր նոր ավարտ հեքիաթի համար, մուտքագրի՛ր:**

7. Նամակ գրի՛ր՝

Հուռիին՝

Ամուսնուն՝

Մայրիկին՝

ԿԱՑԻՆ ԱԽՊԵՐ

Հովհաննես Թումանյան

Մի մարդ գնաց հեռու երկիր՝ աշխատանք անելու։ Ընկավ մի գյուղ։ Տեսավ՝ այս գյուղի մարդիկ ձեռով են փայտ կոտրատում։

- Ախպե՛ր,- ասավ,- ինչո՞ւ եք ձեռով փայտ անում, մի՞թե կացին չունեք։

- Կացինն ի՞նչ բան է,- հարցրեցին գյուղացիք։

Մարդը իր կացինը գոտկից հանեց, փայտը ջարդեց, մանրեց, դարսեց մյուս կողմը։ Գյուղացիք այս որ տեսան, վազեցին գյուղամեջ, ձայն տվին իրար.

- Տո՛, եկե՛ք, տեսե՛ք՝ կացին ախպերը ինչ արավ։

Գյուղացիք հավաքվեցին կացնի տիրոջ գլխին, խնդրեցին, աղաչեցին, շատ ապրանք տվին ու կացինը ձեռքիցն առան։

Բարի կացինը

Կացինն առան, որ հերթով կոտորեն իրանց փայտը։

Առաջին օրը տանուտերը տարավ։ Կացինը վրա բերավ թե չէ՝ ոտը կտրեց։ Գոռալով ընկավ գյուղամեջ։

- Տո՛, եկե՛ք, եկե՛ք, կացին ախպերը կատաղել է, ոտս կծեց։

Կատաղած կացինը

Գյուղացիք եկան, հավաքվեցին, փայտերն առան, սկսեցին կացնին ծեծել։ Ծեծեցին, տեսան՝ բան չդառավ, փայտերը կիտեցին վրան, կրակեցին։

Բոցը բարձրացավ, չորս կողմը բռնեց։ Երբ կրակն իջավ, եկան բաց արին, տեսան՝ կացինը կարմրել է։

- Վա՜յ, տղե՛ք, կացին ախպերը բարկացել է, տեսե՛ք՝ ոնց է կարմրել, որտեղ որ է, մեր գլխին մի փորձանք կբերի։ Ի՞նչ անենք։ Մտածեցին, մտածեցին ու վճռեցին՝ տանեն բանտը գցեն։

Տարան գցեցին տանուտերի մարագը։ Մարագը լիքը դարման էր. գցեցին թե չէ՝ կրակն առավ, բոցը երկինքը բարձրացավ։

Գյուղացիք սարսափած վազեցին տիրոջ ետևից. «Ե՛կ, աստծու սիրուն, կացին ախպորը բա՛ն հասկացրու»։

Առաջադրանքներ

1. **Բացատրի՛ր բառակապակցությունները՝**

աշխատանք անել _____

իրար ձայն տալ _____

կացինը վրա բերել _____

բոցը երկինք բարձրանալ _____

2.Կացնի տիրոջ անունից պատմի՛ր կացինը գյուղացիներին տալու պատմությունը, մուտքագրի՛ր՝

Գնացել էի հեռու երկիր աշխատանք անելու՝ Ընկա մի գյուղ և ի՛նչ տեսնեմ …

3.Մանրամասն պատմի՛ր առաջին փորձանքի մասին՝

_____

_____

_____

4. Այս նախադասություններն արտագրի՛ր՝ դասավորելով ըստ դեպքերի հաջորդականության։

Գյուղացիները կացինը վերցրին։

Կացինը գցեցին մարագը, մարագը վառվեց։

Տանուտերը կացինով ոտը կտրեց, որովհետև օգտագործել չգիտեր։

Կացնին ծեծեցին։

Կացնին վառեցին։

_____

_____

_____

_____

_____

_____

5. Քո կարծիքով՝

Ա) Ինչպիսի՞ն էր կացինը։

_____

_____

_____

Բ) Ինչպիսի՞ն էին գյուղացիները։

_____

_____

_____

6. Հարցեր տո՛ւր՝

Ա) Գյուղացիներին

_____

_____

_____

Բ) Կացնին

_____

_____

_____

7. Խորհո՛ւրդ տուր գյուղացիներին։

_____

_____

_____

8. Պատկերացրո՛ւ, որ հանդիպել ես այլմոլորակայինի: Բացատրի՛ր նրան, թե ինչ է կացինը:

_____

_____

_____

_____

ՍՈՒՏԼԻԿ ՈՐՍԿԱՆԸ

Հովհաննես Թումանյան

մաս 1-ին

Հորս կնունքով, մորս ծնունդով, վեր կացանք մի օր հինգ ու վեց հոգով, թրով-թվանքով որսի գնացինք։ Հադին էր, Հյուդին էր, Չատին էր, Մատին էր, հերս էր, ես էի. գնացինք որսի…

Սարեր, ձորեր դուզ գնացինք, որտեղ որս կար՝ սուսուփուս գնացինք, որտեղ աի էր՝ կուզեկուզ գնացինք…

Գնացի՜նք, գնացի՜նք, շատ թե քիչ, մին էլ տեսնենք երեք լիճ. երկուսը՝ ցամաք, մնի մեջ էլ իսկի ջուր չկա։ Մին էլ, ըհը՛, մտիկ տանք, որ էս անջուր լճում լողում են, ճչում երեք հատ սիպտակ բադ, երկուսը սատկած են, մինն էլ կենդանի չի։

— Հադի՛, տո՛ւր հա, տո՛ւր։

Թե՝ թվանք չունեմ։

— Հյուդի՛, տո՛ւր հա, տո՛ւր։

— Ես էլ չունեմ։

— Չատի… Մատի…

— Մենք էլ չունենք։

— Բա ի՞նչ անենք…

Հորս ձեռին կարճ ու երկար, հաստ ու բարակ մի փետ կար. երեսն առավ, նշան դրեց, մին էլ տրա՛ք, որ կրակեց… Նա կրակեց, ես զարկեցի. որ զարկեցի՝ փռվեց էսպես, ամեն թևը հինգ գազ ու կես…

— Հադի, դանա՛կ…

Թե՝ դանակ չունեմ։

— Հյուդի, դու…

— Ես էլ չունեմ… - Չատի՞, Մատի՞…

- Մենք էլ չունենք։

- Բա ի՞նչ անենք…

Հերս էլ ունի, բերան չունի։

Էս անբերան դանակը քաշեցինք։ Հադին մորթեց, չկարաց. Հյուդին մորթեց, չկարաց, Չատին չկարաց, Մատին չկարաց, հերս էլ չկարաց, ես քաշեցի մորթեցի։

Մորթեցի, վեր գցեցի, բադ մի ասիլ, մի գոմեշ ասա։ Հադին շալակեց, չկարաց, Հյուդին շալակեց, չկարաց, Չատին չկարաց, Մատին չկարաց, հերս էլ չկարաց, ես շալակեցի։ Շալակեցի, գնացինք։

Առաջադրանքներ

1.Ի՞նչ են նշանակում. բացատրի՛ր։

սուս ու փուս- մտիկ տալ_____

_____

մընի բերանում էլ շունչ չկա _____

_____

ո՛չ աչքներս բան տեսավ, ո՛չ բերաններս բան մտավ _____

_____

ամեն թևը հինգ գազ ու կես _____

_____

2.Այս նախադասություններին համապատասխան նախադասությունները գտի՛ր ու գրի՛ր։

Ա) Որտեղ որս կար՝ լուռ գնացինք։

_____

_____

Բ) Բավականին գնացինք, մեկ էլ տեսնենք երեք լիճ. երկուսը՝ ցամաք, մեկն էլ՝ անջուր։

Գ) Նա կրակեց, ես զարկեցի, որ զարկեցի՝ փռվեց էսպես-թևերը՝ երկա՛ր-երկար։

Դ) Մորթեցի, գցեցի, մի հսկայական բադ էր։

մաս 2-րդ

Գնացինք, գնացինք, հասանք մի տեղ, մին էլ տեսնենք երեք գեղ, երկուսի տեղն իսկի չի երևում, մնումն էլ իսկի շենլիկ չկա։ Էս անշեն գեղում դես ման եկանք, դեն ման եկանք, մի տուն գտանք, մեջը՝ երեք պառավ, երկուսը՝ մեռած, մնի բերնումն էլ շունչ չկա։

- Տղերք,- ասինք,- եկեք բադով փլավ անենք։

Էս անշունչ պառավը գնաց դես ման եկավ, դեն ման եկավ, կես բրինձ գտավ, երեք պղինձ, երկուսը՝ ծակ, մինն էլ իսկի տակ չունի։

Ջուրը լցրինք էս անտակ պղինձը, մեջը ածինք բադն ու բրինձը, անկրակ եփեցինք։ Եփեց, եփեց, միսն ու բրինձը գնացին, մնաց ջուրը։

Որսից եկած սոված մարդի՜կ, վրա եկանք, կերա՜նք, կերա՜նք. ոչ աչքերս բան տեսավ, ոչ բերաններս բան մտավ։

Առաջադրանքներ

1. **Պատմի՛ր ըստ տրված վերնագրերի։**

Գնացինք որսի

Երեք բադ

Երեք պառավ

Բադով փլավ

2. Հեքիաթից դո՛ւրս գրիր ամենահետաքրքիր հատվածը։

_____

_____

_____

3.Սուտլիկ որսկանի անունից բոլորին հրավիրի՛ր բադով փլավ ուտելու։

_____

_____

_____

_____

4.Անշունչ պառավի անունից շարունակի՛ր պատմել «Սուտլիկ որսկանը»։

Մեր անշեն գյուղում երեք պառավ ենք ապրում, երկուսը՝ մեռած, իմ բերանում էլ ըսկի շունչ չկա։

Մի իրիկուն, որ առավոտ էր, մեր գյուղ եկավ վեց սուտլիկ որսկան, հինգը

_____

_____

_____

_____

5.Նամակ գրի՛ր Սուտլիկ որսկանին, մուտքագրի՛ր, էլփոստով ուղարկի՛ր ընկերոջդ։

6.Սուտլիկ որսկանի անունից նոր սուտլիկ պատմություն հորինի՛ր, մուտքագրի՛ր։

ԿԻԿՈՍԻ ՄԱՀԸ

Հովհաննես Թումանյան

մաս 1-ին

Մի աղքատ մարդ ու կնիկ են լինում, ունենում են երեք աղջիկ։

Մի օր հերը աշխատելիս է լինում, ծարավում է, մեծ աղջկանը ջուրն է ղրկում։ Էս աղջիկը կուժն առնում է գնում աղբյուրը։ Աղբրի գլխին մի բարձր ծառ է լինում։ Էս ծառը որ տեսնում է, իրեն-իրեն միտք է անում.

- Հիմի որ ես մարդի գնամ ու մի որդի ունենամ, անունն էլ դնենք Կիկոս։ Կիկոսը գա, էս ծառին բարձրանա ու վեր ընկնի, քարովը դիպչի, մեռնի...

- Վա՛յ, Կիկոս ջան, վա՛յ...

Տեղն ու տեղը ծառի տակին նստում է՝ սկսում է սուգ անել.

- *Գընացի մարդի,*
  Ունեցա որդի,
  Գրդակը պոպոզ,
  Անունը Կիկոս.
  Վեր ելավ ծառին,
  Ցած ընկավ քարին...
  Վա՛յ, Կիկոս ջան,
  Վա՛յ, որդի ջան...

Մերն սպասում է, սպասում, տեսնում է չեկավ, միջնեկ աղջկանն է ղրկում: Ասում է.

- Գնա՛, մի տե՛ս, քույրդ ընչի՞ ուշացավ:

Միջնեկ աղջիկն է գնում:

Մեծ քույրը սրան որ հեռվից տեսնում է, ձենն ավելի է բարձրացնում:

- Արի՛, արի՛, անբախտ մորքուր, տե՛ս քո Կիկոսն ինչ եղավ:

- Ի՞նչ Կիկոս:

- Բա չես ասիլ՝

- *Գընացի մարդի,*
Ունեցա որդի,
Գըդակը պոպոզ,
Անունը Կիկոս.
Վեր ելավ ծառին,
Ցած ընկավ քարին...
Վա՛յ, Կիկոս ջան,
Վա՛յ, որդի ջան...

- Վա՛յ, Կիկոս ջան, վա՛յ,- գոռում է միջնեկ քույրը, նստում է մեծ քրոջ կողքին, ու սկսում են միասին սուգ անել:

Մերն սպասում է, սպասում, տեսնում է չեկան, պստիկ աղջկանն է ղրկում: Ասում է.

- Աղջի՛, մի գնա տես՝ քույրերդ ի՞նչ եղան: Գնացին, ետ չեկան:

մաս 2-րդ

Հիմի պստիկ աղջիկն է գնում։ Գնում է տեսնում՝ երկու քույրերն էլ աղբրի գլխին նստած՝ լաց են լինում։

- Քա՛, ընչի՞ եք լաց ըլում։

Մեծ քույրը թե՝ բա չես ասիլ՝

- Գընացի մարդի,
  Ունեցա որդի,
  Գըդակը պոպոզ,
  Անունը Կիկոս.
  Վեր ելավ ծառին,
  Ցած ընկավ քարին...
  Վա՜յ, Կիկոս ջան,
  Վա՜յ, որդի ջան...

- Վա՜յ քու մորքուրին, Կիկո՛ս ջան, վա՜յ։

Սա էլ է գլխին տալիս ու մյուսների կողքին նստում, ձեն-ձենի տալիս։

Մերն սպասում է, սպասում, տեսնում է աղջիկները չեկան, ինքն է գնում։

Հեռվից իրենց մորը տեսնում են թե չէ, երեք աղջիկն էլ կանչում են.

- Արի՜, արի՜, անբա՛խտ տատի, տե՛ս, թոռանդ գլուխն ինչ է եկել։

- Ի՞նչ թոռ, ա՛յ աղջկերք, ի՞նչ է պատահել։

Մեծ աղջիկը թե՝ բա չես ասիլ, ա՛յ մեր՝

- Գընացի մարդի,
  Ունեցա որդի,
  Գըդակը պոպոզ,
  Անունը Կիկոս.
  Վեր ելավ ծառին,
  Ցած ընկավ քարին...
  Վա՜յ, Կիկոս ջան,
  Վա՜յ, որդի ջան...

-Վա՜յ, քոռանան քու տատի աչքերը, Կիկո՜ս ջան,- մերն էլ ծնկանը զարկում է, նստում է աղջիկների կողքին, սկսում է նրանց հետ սուգ անել։

Մարդը տեսնում է՝ կնիկն էլ գնաց աղջիկների ետևից ու սա էլ չեկավ։ Ասում է՝ մի գնամ, տեսնեմ էս ի՞նչ պատահեց, որ սրանք իրար ետևից գնացին, մնացին աղբրումը։

Վեր է կենում, գնում։

Կնիկն ու աղջկերքը հենց սրա գլուխը հեռվից տեսնում են թե չէ, ձեն են տալի.

- Արի՜, արի՜, անբա՛խտ պապի, արի՜ տես՝ քու Կիկոսի գլուխն ի՞նչ է եկել... վա՜յ քու Կիկոսին...

- Ի՞նչ Կիկոս, ի՞նչ եք ասում,- զարմանում է մարդը։

Մեծ աղջիկը թե՝ բա չես ասիլ, ա՛յ հեր՝

- *Գընացի մարդի,*
  Ունեցա որդի,
  Գրդակը պոպոզ,
  Անունը Կիկոս.
  Վեր ելավ ծառին,
  Ցած ընկավ քարին...
  Վա՜յ, Կիկոս ջան,
  Վա՜յ, որդի ջան...

-Վա՜յ, Կիկոս ջա՜ն,- ծնկներին տալիս են ու սուգ են անում մեր ու աղջկերք։

Սրանց միջի խելոքը հերն է լինում։ Ասում է.

- Ա՛յ հիմարներ, ի՞նչ եք նստել էստեղ ու սուգ եք անում։ Ինչքան էլ սուգ անեք, ինչքան էլ լաց ըլեք, հո Կիկոսն էլ կենդանանալու չի։ Վեր կացեք, եկեք, գնանք մեր տունը, մարդ կանչենք, ժամ ու պատարագ անենք, Կիկոսի քելեխը տանք, լացով ի՞նչ պետք է անենք։ Աշխարհքի կարգ է, ինչպես եկել է, էնպես էլ պետք է գնա։

Դու մի՛ ասիլ՝ սրանց ունեցած-չունեցածը չորսոտանի մի եզն է լինում, ունեցած փոշին էլ՝ մի քթոց ալյուր։

Գալիս են, էս եզը մորթում, էս մի քթոց ալյուրն էլ հաց թխում, ժողովուրդ են կանչում, ժամ ու պատարագ են անում, Կիկոսի քելեխն ուտեցնում, որ նոր հանգստանում են։

Առաջադրանքներ

1. Ինչպիսի՞ն են հեքիաթի հերոսները: Ընդգծի՛ր ճիշտ պատասխանը:

Հիմար, խորամանկ, բարի, չար, անխելք, ուրախ:

2. Բառակապակցությունների իմաստն արտահայտի՛ր մեկ բառով:

սուգ անել _____

միտք անել _____

վեր ընկնել _____

3. Խորհո՛ւրդ տուր հեքիաթի հերոսներին:

_____

_____

_____

4.Paint նկարչական ծրագրով նկարի՛ր հեքիաթի հերոսներին:

5.Հորինի՛ր հեքիաթի նոր ավարտ, մուտքագրի՛ր:

ՈՍԿՈՒ ԿԱՐԱՍԸ

Հովհաննես Թումանյան

մաս 1-ին

Ես մեր ծերերիցն եմ լսել, մեր ծերերը՝ իրենց պապերից, նրանց պապերն էլ՝ իրենց մեծերից, թե մի ժամանակ մի աղքատ հողագործ է լինում, ունենում է մի օրավար հող ու մի լուծ եզը։

Ձմեռը էս աղքատ հողագործի եզները սատկում են։ Գարունքը, վարուցանքի ժամանակը որ գալիս է, եզը չի ունենում, թե վարի, հողը վարձով տալիս է իր հարևանին։

Էս հարևանը վարելու ժամանակ խոփը մի տեղ դեմ է ընկնում, դուրս է գալի մի կարաս, մեջը՝ լիքը ոսկի։

Եզները լծած թողնում է, վազում է գյուղը հողատիրոջ մոտ։

- Հե՛յ, աչքդ լո՛ւս,- ասում է,- քու հողումը մի կարաս ոսկի դուրս եկավ, արի տա՛ր։

- Չէ՛, ախպե՛ր, էդ իմը չի,- պատասխանում է հողատերը։ - Հողի վարձը դու տվել ես, դու վարում ես, էն հողումն ինչ էլ դուրս գա, քունն է. ոսկի է դուրս եկել, թող ոսկի լինի, էլի քունն է։

Սկսում են վիճել. սա ասում է՝ քունն է, նա թե չէ՝ քունը։ Վեճը տաքանում է, իրար ծեծում են։ Գնում են թագավորի մոտ՝ գանգատ։

Թագավորը մի կարաս ոսկու անունը լսում է թե չէ, աչքերը չորս է բաց անում։ Ասում է.

- Ոչ քո՛ւնն է, ոչ դրա՛նը, իմ հողում կարասով ոսկի է դուրս եկել, իմն է։

Իր մարդկանցով գնում է, որ հանի, բերի։ Գնում է, կարասի բերանը բաց անել է տալի, տեսնում, ի՞նչ ոսկի, կարասը լիքը օձ…

Զարհուրած ու կատաղած ետ է գալի։ Հրամայում է պատժել անգետ ռանչպարներին, որ համարձակվել են իրեն խաբել։

- Չէ՛, թագավորն ապրած կենա,- գոռում են խեղճերով,- մեզ ինչո՞ւ ես սպանում, լավ չես տեսել, օձ չկա էնտեղ, ոսկի՛ է, ոսկի՛…

մաս 2-րդ

Թագավորը նոր մարդիկ է ուղարկում, որ գնան, ստուգեն։ Մարդիկը գնում են, ետ գալի թե՝ ճշմարիտ, ոսկի է։

- Վա՜հ,- զարմանում է թագավորը։ Ասում է. «Երևի լավ չտեսա, կամ տեսածս էն կարասը չէր»։

Վեր է կենում, մին էլ գնում։

Կարասը բաց է անում, դարձյալ մեջը լիքը օձ։

Էս ի՞նչ հրաշք է, ի՞նչ միտք ունի, չեն հասկանում։

Թագավորը հրամայում է, հավաքում է իր երկրի իմաստուններին։

- Բացատրեցե՛ք,- ասում է,- ո՛վ իմաստուններ, ի՞նչ հրաշք է սա։ Էս հողագործներն իրենց հողում կարասով ոսկի են գտել։ Ես եմ գնում՝ կարասը լիքն օձ է դառնում, սրանք են գնում՝ ոսկի։ Էս ի՞նչ կնշանակի։

- Դրա բացատրությունն էս է, թագավո՛ր, եթե չես բարկանալ,- ասում են իմաստունները։ - Կարասով ոսկին աղքատ հողագործներին պարգև է ղրկած իրենց ազնվության ու արդար աշխատանքի համար։ Երբ որ նրանք են գնում, իրենց արդար վարձին են գնում ու միշտ էլ ոսկի են գտնում, իսկ երբ որ դու ես գնում, գնում ես ուրիշի բախտը հափշտակես, նրա համար էլ ոսկու տեղ օձ ես գտնում։

Թագավորը ցնցվում է, խոսք չի գտնում պատասխանելու։

- Լա՛վ,- ասում է,- դե հիմի է՛ն որոշեցեք, թե էդ երկուսից ո՞րին է պատկանում գտած ոսկին։

- Իհա՛րկե հողատիրոջը,- ձայն է տալի վարող գյուղացին։

- Չէ՛, վարողի՛նն է,- մեջ է մտնում հողատերը։

Ու նորից սկսում են կռվել։

- Լա՛վ, լա՛վ, կացե՛ք,- կանգնեցնում են իմաստունները,- ի՞նչ ունեք դուք, տղա կամ աղջիկ։

Դուրս է գալի, որ մինը մի տղա ունի, մյուսը՝ մի աղջիկ։ Իմաստունները վճռում են, որ սրանք գնան իրենց աղջիկն ու տղեն իրար հետ պսակեն, էն գտած ոսկին էլ տան նրանց։ Էստեղ համաձայնում են բարի մարդիկը, ուրախանում են, ու կռիվը վերջանում է, սկսում է հարսանիքը։ Օխտն օր, օխտը գիշեր հարսանիք են անում, կարասով ոսկին էլ, որ պարգև էր ղրկած իրենց ազնվության ու արդար աշխատանքի համար, տալիս են իրենց զավակներին։

Բարին էստեղ, չարը՝ էն ագահ թագավորի մոտ։

Առաջադրանքներ

1. **Ընդգծված բառերի կողքին իմաստով մոտ այլ բառեր գրի՛ր։**

Կարասով ոսկին աղքատ հողագործներին **նվեր** (_____) է ուղարկված իրենց ազնվության ու **ազնիվ** (_____) աշխատանքի համար։

Երբ դու ես գնում, գնում ես ուրիշի բախտը **խլելու** (_____)։

2. Վերնագրի՛ր կարասի հատվածը։

Չեմ հիշում քանի տարի էի մնացել հողում։ Մի օր ինչ-որ բան ինձ դեմ առավ։ Ասացի՝ լավ է, հիմա ինձ հողից կհանեն։ Այդպես էլ եղավ, մի գյուղացի ինձ հանեց ու թողեց գնաց։

Մեկ էլ տեսնեմ՝ մի թագավոր եկավ, նայեց ինձ, գույնը գցեց ու հեռացավ։ Երևի ոսկիներս նրան դուր չեկան։

_____

_____

_____

_____

_____

3. **Աչքալուսանք տո՛ւր գյուղացիներին և շնորհավորի՛ր նրանց զավակների ամուսնության առթիվ։**

4. **Շարունակի՛ր կարասի և նրա միջի ոսկու զրույցը թագավորի մասին։**

- Տեսնես ո՞վ է այդ մարդը,- շշուկով հարցրեց կարասը։

- Գլխին թագ կար, ուրեմն՝ թագավոր էր,-պատասխանեց ոսկին։

5. Շարունակի՛ր ինքդ հորինել։

Ես մեր ծերերից եմ լսել, մեր ծերերը՝ իրենց պապերից, նրանց պապերն էլ՝ իրենց մեծերից։

ՉԱՐԻ ՎԵՐՋԸ

Հովհաննես Թումանյան

մաս 1-ին

Լինում է մի սար,
Էն սարում մի ծառ,
Էն ծառում փըչակ,
Փըչակում մի բուն,
Բընում երեք ձագ,
Ու վըրեն Կըկուն։
-Կո՛ւկու, կո՛ւկու, իմ կուկուներ,
Ե՞րբ պիտի դուք առնեք թևեր,
    Թըռչե՛ք, գընաք,
    Ուրախանաք...
Երգում էր մարիկ Կըկուն.
Մին էլ, ըհը՛, Աղվեսն եկավ.
    - Էս սարը իմն է,
    Էս ծառը իմն է,
    Ծառում փըչակ կա,
    Փըչակում՝ մի բուն,
    Էս ո՞վ է եկել
    Տիրացել թաքուն։
Ախ դու Կըկու, հիմա՛ր Կըկու,
Քանի՞ փոքրիկ ձագ ունես դու։
- Երեք հատ ձագ, աղա Աղվես։

- Երեք հատ ձագ ցույց կըտամ քեզ։
Ու չե՞ս ասել, դու, անամոթ,
Մինը ծառա ղըրկես ինձ մոտ։
Զըգի շուտով մի հատը ցած,
Թե չէ՝ կացինս հըրեն սըրած,
Գընամ բերեմ,
Ծառը կըտրեմ...
- Վա՛յ, չըկտրես,
Աստված սիրես,
Էս մինն ահա
Տար քեզ ծառա,
Միայն թե էդպես
Մի ջընջիլ մեզ
Բընով–տեղով,
Ամբողջ ցեղով։
Խնդրեց մարիկ Կըկուն ու ձագերից մինը ձգեց ներքև։
Աղվեսը՝ հա՛փ, առավ գնաց։
— Վայ–վա՛յ, դու–դո՛ւ,
Իմ լավ կուկու.
Ո՞ր սև սարում,
Ո՞ր անտառում,
Ո՞ր թըփի տակ
Կորար մենակ...
Վայ–վա՛յ, դու–դո՛ւ,
Իմ խեղճ կուկու...

մաս 2-րդ

Լաց էր լինում մարիկ Կըկուն, մին էլ, ըհը՛, Աղվեսը ետ եկավ։

— Էս սարը իմն է,

Էս ծառը իմն է,

Ծառում փըչակ կա,

Փըչակում՝ մի բուն,

Էս ո՞վ է եկել

Տիրացել թաքուն։

Ախ դու Կըկու, հիմար Կըկու,

Քանի՞ փոքրիկ ձագ ունես դու։

- Երկու հատ ձագ, աղա Աղվես։

- Երկու հատ ձագ ցույց կըտամ քեզ։

Ա՛խ, չարամիտ դու ավազակ,

Ի՛նչ խաբար է, երկո՛ւ հատ ձագ.

Ի՛նչ, ուզում էս էստեղ զոռով

Լըցնես ամբողջ կըկուներո՞վ…

Զըգի շուտով մի հատը ցած,

Թե չէ՝ կացինս հըրեն սըրած,

Գընամ բերեմ,

Ծառը կըտրեմ…

— Վա՛յ, չըկտրես,

Աստված սիրես,

Էս էլ առ տար,

Ու թող դադար՝

Վերջինը գեթ

Մընա ինձ հետ…

Աղաչեց մարիկ Կրկուն ու երկրորդ ձագն էլ ձգեց ներքև։

Աղվեսը՝ հա՛փ, էս էլ առավ ու գնաց։

— Վայ-վա՛յ, վույ-վո՛ւյ,

Ընչի՞ համար

Եկա ես սար,

Բուն շինեցի,

Ձագ հանեցի…

Աղվեսն եկավ,

Տարավ, կերավ,

Երկու, երկու,

Կուկու… կուկու…

մաս 3-րդ

Լաց էր լինում մարիկ Կըկուն։
Էս միջոցին — դա՜, դա՜, դա՜, Ագռավն անց էր կենում
էն կողմերով։ Լսեց Կըկվի լացի ձայնը։
— Էդպես տխուր ու զարհուրիկ
Ի՞նչ ես լալիս, Կըկու քուրիկ։
— Ինչպես չըլամ, ա՛ սանամեր.
Աղվեսն եկավ էն սըրտամեռ,
Գըլխիս էսպես փորձանք բերավ,
Ձագուկներըս տարավ, կերավ։
— Վո՜ւյ իմ աչքին, անխելք Կըկու,
Ինչպես իզուր խաբվել ես դու
Սուտ խոսքերից չար Աղվեսի։
Ո՜ն՜ց թե սարը իմն է՝ կասի։
Ո՞վ է տըվել էն լըրբին սար.
Սարն ամենքիս է հավասար…
Ո՞վ կըթողնի վեր կենա նա
Ամբողջ սարին գա տիրանա,
Անունը տա սըրած կացնի,
Սրան-նրան սուտ վախեցնի,
Ու մինն էսօր, մյուսը—երեկ,
Ձագեր տանի, ուտի մեկ-մեկ…
Սև գրողի էն տարածին
Ո՞վ է տըվել սըրած կացին։
Մին էլ որ գա ու սպառնա,

Մի՛ վախենա, քըշի գնա:

Էսպես ասավ Ագռավն ու թըռավ գընաց: Ահա կրկին Աղվեսն եկավ:

— Էս սարը իմն է,

Էս ծառը իմն է…

Հազիվ էր ասել, Կըկուն բնից գլուխը հանեց՝

— Սուտ ես ասում, դու խաբեբա,

Անխիղճ գազան, անկուշտ, ագահ:

Ո՞վ է տվել էստեղ քեզ սար,

Սարն ամենքիս է հավասար:

Ի՛նչ ես եկել սուտ տեր դարձել,

Ես էլ հիմար՝ ճիշտ եմ կարծել,

Ձագուկներըս տըվել եմ քեզ…

Կորի՛, գընա, դու չար Աղվես,

Հերիք ինչքան սուտ ես ասել.

Հիմի գիտեմ, չեմ վախում էլ.

Կացին չունես ծառը կըտրես:

— Ո՞վ ասավ քեզ:

— Ագռավն ասավ:

— Ագռա՞վը, լա՛վ:

Ու Ագռավի վրա բարկացած Աղվեսը պոչը քաշեց, հեռացավ: Գնաց մի դաշտում սուտմեռուկի տվավ, վեր ընկավ, իբրև թե սատկել է: Ագռավն էլ կարծեց՝ իրավ սատկել է, թռավ եկավ վրեն իջավ, որ աչքերը հանի: Աղվեսը՝ հա՛փ, հանկարծ բռնեց:

— Ղա՜-ղա՜, ղա՜-ղա՜,

Աղվես աղա…

— Ա՛յ դու կռավան չարալեզու,

Ո՞նց թե Կրկվին ասել ես դու,

Թե ես կացին չունեմ սրրած…

Կացին չունե՞մ… դե՞ հիմի կա՛ց…

— Վա՛յ, քեզ մեղա,

Աղվես աղա,

Ես եմ ասել, չեմ ուրանամ,

Ինձ քրրքրրի, ինձ կեր հում-հում,

Տո՛ւր ինչ պատիժ սիրտրդ կուզի,

Բայց մի վերջին խոսքրս լրսի:

Ես էն սարում, հենց դեմ ու դեմ,

Էնպես մի թանկ պահուստ ունեմ,

Որ չես գրտնի դու քո օրում

Ոչ մի թառում կամ անտառում:

Ընչի՞ համար էն ահագին

Գանձը կորչի հողի տակին:

Արի գրնանք, հանեմ տամ քեզ,

Էնքան ուտե՞ս, էնքան ուտե՞ս…

Թե չրլինի ու սուտ դուրս գամ,

Ես հո էստեղ միշտ կամ ու կամ…

— Գնա՛նք, ասավ Աղվեսը: Թե կրլինի, շատ լավ,

թե չի լինի, էլի քեզ կուտեմ:

Գնացին:

Վերևից թռչելիս Ագռավը նկատել էր, որ մի թփում պառկած էր գյուղացու շունը: Աղվեսին տարավ, տարավ, դուրս բերավ ուղիղ էն թփի վրա:

— Ա՛յ, ասեց. էս թփումն է իմ պահուստը:

Աղվեսն ագահ վրա ընկավ թփին. շունը վեր թռավ, կոկորդից բռնեց ու դրեց տակին: Աղվեսը խեղդվելով սկսավ խռխռալ.

— Ա՜խ, ե՜ս… ա՜խ, ե՜ս…

Զգույշ Աղվես,

Փորձանքի մեջ

Ընկնեմ էսպե՜ս…

Ա՜խ, անիրա՜վ

Դու սև Ագռավ…

— Ինչքան էլ որ լինիս զգույշ,

Չարի համար թե վաղ, թե ուշ,

Էդ է պահված, Աղվես աղա,

Ղա՜, ղա՜, ղա՜, ղա՜…

Պատասխանեց Ագռավն ու թռավ:

Առաջադրանքներ

1. Գրի՛ր այնպես, ինչպես «Չարի վերջում» է:

Էս ո՞վ է եկել, _____

Մին էլ որ գա _____

Սև գրողի էն _____

Որտեղի՞ց _____

2.Աղվեսի խոսքերում Կկուն ինչպիսի՞ն է. ընդգծի՛ր այդ հատվածները:

3.Քո կարծիքով ինչպիսի՞ն է աղվեսը. ինչո՞ւ ես այդպես կարծում:

_____

_____

_____

_____

4.Եթե հանդիպես կկվին, ի՞նչ կասես։

5.Ի՞նչ ես կարծում՝ այս պատմության մեջ աղվեսն ինչո՞ւ պատժվեց։

6.Խորհո՛ւրդ տուր աղվեսին։

7.Նկարի՛ր աղվեսի և կկվի հանդիպումը։

ԹՌՉՆԻ ՁԱԳԵՐԸ

Տեղեկատվական տեքստ

Մայր թռչունը մեկ կամ մի քանի ձու է ածում և թուխս նստում:

Որքան մեծ է թռչունը, այնքան երկար ժամանակ է թուխս նստում:

Ձագուկները կտուցով ճեղքում են ձուն և ինքնուրույն դուրս գալիս նրա միջից:

Մայրն ու հայրը օրը մի քանի անգամ իրենց կտուցներով ուտելիք (սնունդ) են բերում ձագուկների համար:

Ծնողները ցրտին տաքացնում են ճտերին, պաշտպանում անձրևից, այրող արևից, թշնամիներից:

Երբ ձագերը քիչ մեծանում են, ուժ հավաքում, ծնողները նրանց թռչել են սովորեցնում:

Միայն կկուն է անհոգ ապրում՝ բույն չի հյուսում, թուխս չի նստում, չի խնամում ձագերին: Նա իր ձվերը գցում է տարբեր թռչունների բների մեջ, ու՝ ոչ մի հոգս: Հենց որ կկվի ձագը ձվից դուրս է գալիս, սկսում է «տանտիրոջ» ձվերը բնից դուրս գցել, որ իր կերը շատ լինի: Գիտե՞ս ինչ շատակերն է կկվի ձագը: Կարճ ժամանակում նա «խորթ» ծնողներից վելի խոշոր է դառնում:

Իսկ «խորթ» ծնողները այդպես էլ չեն իմանում, որ իրենք ուրիշի ձագին են կերակրում, շահում-պահում: Այ քեզ կկու՛…

Առաջադրանքներ

1. Քանի՞ ձագ են ունենում թռչունները։

_____

_____

2. Թռչնի ձագերը ինչպե՞ս են ձվից դուրս գալիս։

_____

_____

3. Թռչուններն ինչպե՞ս են կերակրում ձագերին։

_____

_____

4. Թռչուններն ինչպե՞ս են խնամում ձագերին։

_____

_____

_____

5. Գրի՛ր թռչունների անուններ և դասավորի՛ր դրանք այբբենական կարգով:

_____

_____

_____

_____

6. Պատմի՛ր քո մայրիկի մասին: Ինչպիսի՞ն է նա:

Իմ մայրիկը

ԱՐԱԳԻԼ

(ժողովրդական)

Արագի՛լ, բարով եկար,
Հա՜յ, արագի՛լ, բարով եկար.
Դու մեզ գարնան նշան բերիր,
Մեր սրտերը ուրախ արիր։
Արագի՛լ, երբ գընացիր,
Դու մեզանից երբ գընացիր,
Հա՜ փըչեցին բուք ու բորան,
Ծաղիկները ամեն տարան։

Արագի՛լ, բարով եկար,
Հա՜յ, արագի՛լ, բարով եկար.
Բունըդ շինիր էն հին ծառին
Մեզ մոտ մնա ամբողջ տարին։

Առաջադրանքներ

1. Ե՞րբ է գալիս արագիլը։

2. Ի՞նչ գիտես արագիլի մասին, պատմի՛ր։

ԶԱՏԻԿ

Տեղեկատվական տեքստ

Կարմիր, մեջքին պուտ-պուտ նախշերով թևեր ունեցող, կլորավուն բզեզը՝ զատիկը, Զատկի տոնական օրերին է սովորաբար հայտնվում: Ժողովրդին նա հայտնի է նաև «Մայրամ խաթուն», «Աստծու եղնակ», «Չալ պղոճ» անուններով: Այս բզեզը բարի լուր բերող է համարվում: Երեխաները նրան դնում են ձեռքի ափի կամ բռունցքի վրա, անշարժանում մինչև թևածելն ու թռչելը և երգում.

-Զատի՛կ, Զատի՛կ, Նավակատի՛կ,
Արի՛, նստի՛ մեր տան մոտիկ,
Իմ հեր քե կանի ուր լաճիկ,
Իմ մեր քե կանի ուր հարսիկ,
Ես քե կուտամ իմ խաս գուլպեն,
Արի՛, խե՛ր բեր մեր տան վրեն:

Զատկի բզեզին ձեռքին դնելով՝ երեխաները գուշակություններ են անում.

- Զատի՛կ, զատի՛կ,

Կարմիր հատիկ,

Մայրս ի՞նչ է բերելու.

Տղա, աղջիկ,

Տղա, աղջիկ,

Տղա, աղջիկ...

Զատկի օգնությանը նաև մեծերն են դիմել: Զատկի հայտնվելուն պես վերցրել են նրան, ձեռքներին դրել ու որևէ բան խնդրել: Մարդիկ հաճախ զատկի թռիչքի հետ են կապել իրենց ցանկությունների կատարումը:

Եթե զատիկը թռչում-հեռանում է, ապա լավ եղանակ է սպասվում, իսկ եթե չի թռչում, ապա անձրևոտ ու մռայլ եղանակ է սպասվում:

Առաջադրանքներ

1. Նկարագրի՛ր զատկին։

2. Ի՞նչ անուններով է ժողովրդին հայտնի զատիկը։

3. Համացանցում որոնի՛ր *զատիկ* միջատի մասին այլ տեղեկություն։ Արդյո՞ք նա կապ ունի Զատիկ տոնի հետ։

ԶԱՏԿԱԿԱՆ ԱՍԻԿՆԵՐ

Տի՛զ, տի՛զ, Ակլատի՛զ,

Մազդ բիզ-բիզ,Ակլատի՛զ։

Պասը գնաց, Զատիկն էկավ,

Այծն էլ խոտը կերել է։

***

Զատկեզատի՛կ է, Նավակատիկ է, չամչեհատիկ է։

***

Կարմիր ձու տուր, կարմիր օր տամ։

***

Ունեցողի համար ամեն օր Զատիկ է։

***

Կարմիր ձուն Զատկին կսազե։

***

Զատիկը առանց ձվի չի լինի։

***

Զատկից հետո կարմիր հավկիթ։

ԳԵՏԱԿԸ

Հովհաննես Թումանյան

— Ո՞ւր ես վազում
Այդպես արագ,
Ա՛յ դու կայտառ,
Սիրուն գետակ.

Կանգ առ, խաղանք
Էս ծառի տակ։

«Չէ՛, փոքրիկըս,
Գնամ պիտի.
Տե՛ս ջաղացը

Գյուղի մոտի,
Պետք է ուժ տամ,
Որ պըտըտի։

Ցածն էլ հովտում
Անուշահոտ

Ինձ են մնում
Ծաղիկ ու խոտ,
Հոգնած-ծարավ
Տավարն ու հոտ։

Սառն աղբյուրը

Բարձրը սարի
Դրանց համար
Է ինձ տալի
Իր զով ջուրը
Կըլկըլալի։

Իսկ կամուրջի
Տակն էլ որ գա,
Կա լվացքը
Պառավ կընկա,
Պետք է լվամ

Քանի լույս կա։

Դե՛, տեսնո՞ւմ ես,
Մնա՛ս բարով,
Ճամփաս ցանած
Հազար գործով.

Դադար չունեմ
Ես մինչև ծով»։

Առաջադրանքներ

1. **Ինչպիսի՞ն է գետակը։**

Գետակը———————————————— նման կայտառ է։

————————————————————————նման աշխատասեր է։

————————————————————————նման սիրուն է։

———————————————————————— նման վազում է։

————————————————————————նման երգում է։

2.Եթե ճիշտ դասավորես բառերը, կկարդաս շատ խելացի մի միտք։

Գետի գետն կտանի բերածը էլ։

———

3.Շարունակի՛ր ըստ օրինակի։

Գետ-գետակ

Լիճ ————————————————————

Մարդ————————————————————

Արջ————————————————————

Տուն————————————————————

Շուն————————————————————

ՑԱԽԱՎԵԼՆ ՈՒ ԲԵՖԱՆԱՆ

Ջաննի Ռոդարի

մաս 1-ին

Բեֆանան ապրում է Նավոնի հրապարակում: Նոր տարուց հետո նա ցախավելն արդեն օգտագործում է միայն տարբեր աշխարհներ այցելելու համար: Նա Լուսին, Մարս, Անտարես է թռչում: Կտրում-անցնում է միգամածություններ ու գալակտիկաներ: Վերջում Բեֆանաների երկիր է վերադառնում և միանգամից հարձակվում քրոջ վրա, թե ինչու հատակը չի լվացել, կահույքի փոշին չի մաքրել և վարսավիրանոց չի գնացել: Բեֆանայի քույրը նույնպես Բեֆանա է, բայց ճամփորդել չի սիրում: Նա ամբողջ օրը տանը նստած շոկոլադ է ծամում և անիսոնե սառնաշաքար ծծում: Նա ավելի ծույլ է, քան քսանչորս կովը միասին:

Քույրերը ցախավելների խանութ ունեն: Այդտեղից են ավել գնում Իտալիայի բոլոր Բեֆանաները՝ Օմենիայից, Ռեջիո-Էմիլիից, Ռիվիսոնդոլայից՝ (քաղաքներ Իտալիայում) ամեն տեղից գալիս են: Հազարավոր Բեֆանաներ կան, և նրանք շատ-շատ ցախավելներ են օգտագործում, այնպես որ, քույրերի գործը աջ է գնում: Իսկ երբ քիչ են ավել գնում, Բեֆանան քրոջն ասում է.

- Ավել գնողները պակասել են, պետք է մի բան մտածել: Եվ դու, երևի, ճարը կգտնես. չէ՞ որ այդքան շոկոլադ ես ուտում:

- Կարելի է ավելի էժան վաճառել: Հիշո՞ւմ ես՝ անցյալ տարի հին,

վերանորոգված ցախավելներն այդպես նորի տեղ վաճառեցինք:

– Ավելի լավ բան մտածիր, թե չէ կոնֆետիդ ծախսերը կպակասեցնեմ:

Բեֆանայի քույրը լուրջ մտածում է.

- Կարելի է,- ասում է,- նորաձևություն առաջարկել, օրինակ՝ մինի-ավել:

- Դա ի՞նչ է:

- Շատ կարճ ավել:

- Բայց դա անհամեստ կերևա:

- Պա՛հ: Մի քանի ծեր Բեֆանաներ կբարկանան, իսկ հետո, կտեսնես՝ ջահել Բեֆանաների ուշքը կգնա այդպիսի ավելիկների համար:

Նորաձև մինի-ցախավելները շատ Բեֆանաների դուր եկավ: Սկզբում տարեց Բեֆանաները բարկությունից պատեպատ էին զարկվում, նամակ-բողոքներ էին ուղարկում թերթերին, բողոքի ցույցեր անում: Բայց հետո նրանք էլ, վարագույրները պինդ փակում էին և թաքուն փորձում այդ կարճ ցախավելները: Մի գեղեցիկ օր նրանք էլ մինի-ցախավելներով փողոց դուրս եկան: Ժլատ Բեֆանաները պարզապես կտրում են իրենց ցախավելների պոչերը և այդպես օգտագործում: Բայց դա աչք էր ծակում, որովհետև խախտվում էր համաչափությունը, և ժլատությունն էլ նրանց պատիվ չէր բերում:

Առաջադրանքներ

1.Պատմի՛ր Բեֆանայի մասին։

_____

_____

_____

2.Ի՞նչ ճար գտավ Բեֆանայի քույրիկը՝ ավելները շատ վաճառելու համար։

_____

_____

_____

3.Ի՞նչ է մինի- ավելը։

_____

_____

4.Paint նկարչական ծրագրով նկարի՛ր մինի-ցախավելը, հորինի՛ր պատմություն և մուտքագրի՛ր։

5.Ի՞նչ կլիներ, եթե մեքենաների փոխարեն մարդիկ ցախավելներ վարեին։

_____

_____

_____

մաս 2-րդ

Որոշ ժամանակ անց կրկին սկսեցին կարճ ավելներ քիչ գնել:

- Դե,- ասում է Բեֆանան քրոջը,- էլի մի բան մտածի՛ր, թե չէ կինոյի փող էլ չեմ տա:

- Բայց գլուխս էլ է սկսել ցավել, այնքան եմ մտածում:

- Չմտածես, կինո չես գնա:

- Ո՜ւֆ, արի մաքսի-ցախավելների նորաձևություն առաջարկենք:

- Դա ի՞նչ է:

- Շա՜տ երկար ցախավել, երկու անգամ երկար, քան պետք է:

- Քո կարծիքով դա ավելորդություն չի՞ լինի:

- Իհարկե, ավելորդություն կլինի, հենց դրա համար էլ կսկսեն շատ գնել: Այն օրը, երբ առաջին Բեֆանան՝ մի շատ երիտասարդ և սլացիկ Բեֆանիկ, հասարակության մեջ հայտնվում է իր մաքսի-ցախավելով, բոլոր Բեֆանաները ուղղակի նախանձից խելագարվում են՝ քսանյոթ ուշագնացություն, երեսունութ նյարդային նոպա և քառասունինը հազար հեծկլտոց: Դեռ երեկո չեղած՝ արդեն մաքսի-ցախավելների խանութի առջև այնպիսի երկար հերթ առաջացավ, որ դրա վերջը մինչև Բուստո Արսիցիո էր հասնում:

Հաջորդ տարի Բեֆանայի քույրը հայտնագործում է միդի–ցախավելը և քրոջից սալորաչրի միջուկով շոկոլադի տուփ՝ ստանում: Տուփը ո՛չ մեծ էր, ո՛չ փոքր, միջին էր: Բեֆանաները շատ են հարստանում և փոշեկուլի խանութ են բացում:

Հենց այդ ժամանակից սկսվում են դժբախտությունները, որովհետև Բեֆանաները թռչում էին ոչ թե ցախավելներով, այլ փոշեկուլներով և

ներս են քաշում ամպերը, գիսաստղերը, մեծ ու փոքր թռչուններին, օդապարիկները, երկնաքարերը, բնական և արհեստական արբանյակները, փոքր մոլորակները, չղջիկներին և նույնիսկ լատիներեն դասավանդողներին: Իսկ մի Բեֆանա անուշադրության պատճառով մի անգամ ներս է քաշում ինքնաթիռն իր ուղևորներով: Հետո նա ստիպված բոլորին ծխնելույզով տուն է հասցնում:

Փոշեկուլն, իհարկե, օգտակար է մաքրության համար: Իսկ ճամփորդելու համար, ինչ ուզում ես արա, հին ցախավելն ավելի հարմար է:

Առաջադրանքներ

1.Դո՛ւրս գրիր անհասկանալի բառերն ու օնլայն բառարանի օգնությամբ բացատրի՛ր։

_____

_____

_____

_____

2. Հարստանալուց հետո ի՞նչ են անում Բեֆանաները։

_____

_____

_____

3.Հորինի՛ր պատմություն ցախավելների մոլորակի մասին, մուտքագրի՛ր, պատումդ նկարի՛ր Paint նկարչական ծրագրով։

ՄԹԻՑ ՎԱԽԵՑՈՂ ԱՎՏՈԲՈՒՍԸ

Դոնալդ Բիսեթ

Կար – չկար մի փոքրիկ ավտոբուս կար: Նա վառ-կարմիր էր և հայրիկի ու մայրիկի հետ ապրում էր ավտոկայարանում, որտեղ ավտոբուսներն էին քնում: Ամեն առավոտ երեքով լվացվում էին, նախաճաշում էին բենզինով, մեքենայի յուղով, ջրով, իսկ հետո ուղևորներին գյուղից ծովափնյա մեծ քաղաք էին տանում: Գնում-գալիս էին, գնում-գալիս էին: Փոքրիկ ավտոբուսն էլ էր ցերեկները տանում-բերում, տանում-բերում: Բայց հենց մութն ընկնում էր՝ վե՛րջ: Ախր ինքը մթից շատ էր վախենում: Մի օր մայրն ասում է նրան.

- Մի բան պատմեմ, լսի՛ր: Շատ վաղուց մի Մութ էր ապրում: Էս Մութը վախենում էր ավտոբուսներից: Մի օր նրա մայրը… Գիտե՞ս՝ ով էր նրա մայրը, գեղեցկուհի Հիրիկը: Հա՛, մայրը մի օր ասում է Մութին.

- Պետք չէ վախենալ: Եթե դու վախենաս դուրս գալ, վախենաս աշխարհը մթով ծածկելուց, մութը չի ընկնի, մարդիկ այդպես էլ չեն իմանա, որ քնելու ժամանակն է: Աստղերն էլ չեն իմանա, որ երկնում փայլելու ժամանակն է: Դե, ի՞նչ կասես:

Այդ ժամանակ Մութը, որ մինչ այդ պահ էր մտել Արևի թիկունքնում, սկսեց զգուշորեն իջնել փողոցների և տների վրա:
Քաղաքում ավտոբուսները սլանում են իրար ետևից: Մութը սիրտ է անում ու մի քիչ էլ է իջնում ներքև: Փողոցում լապտերները կամաց-կամաց սկսում են վառվել, վարորդներն էլ իրենց մեքենաների լույսերն են

վառում: Վերջապես Մութն ամբողջովին իջնում է քաղաքի վրա: Նա չի հասցնում ուշքի գալ, երբ նրա միջով մի ավտոբուս է սլանում: Ի՞նչ անսպասելի էր….Բայց Մթի համար հաճելի էր, ափսոս մի քիչ խուտուտ էր զգում:

Հետո Մթի միջով էլի մի քանի ավտոբուս է անցնում: Նրանց մեջ լույսեր են վառվում, մարդիկ տոմսեր են գնում, նստում ու կանգնում են: Մի խոսքով՝ ժամանակը շատ լավ էր անցնում:

Մի քիչ ուշ դուրս է գալիս Լուսինը: Ավտոբուսը տների հետ պահմտոցի է խաղում:

Առավոտյան դարձյալ ծագում է արևն ու Մթին ուղարկում տուն՝ մայրիկի մոտ: Բայց Մութն այլևս չէր վախենում ավտոբուսներից: Երբ մայրիկ – ավտոբուսը վերջացնում է իր պատմությունը, փոքրիկ ավտոբուսն ասում է.

– Լա՛վ, ես էլ կգնամ:

Վարոդը գալիս է, շարժիչը միացնում, մարդիկ գալիս են, նստում տեղերում, տոմսավաճառը զանգը տալիս է, և փոքրիկ ավտբուսը գնում է ուղիղ Մթան միջով: Նա մարդկանց գլխավոր փողոցով տանում էր մեծ քաղաք, որը հենց ծովի մոտ էր գտնվում:

Առաջադրանքներ

1.Ի՞նչ գույն էր փոքրիկ ավտոբուսը:

_____

_____

2.Ո՞ւմ հետ էր ապրում փոքրիկ ավտոբուսը:

_____

_____

3. Որտե՞ղ էր ապրում փոքրիկ ավտոբուսը:

_____

_____

4. Ինչո՞վ էին նախաճաշում ավտոբուսները:

_____

_____

5.Ինչի՞ց էր վախենում փոքրիկ ավտոբուսը:

_____

_____

6.Պատմի՛ր, թե ի՞նչ պատմեց մայրիկ ավտոբուսը մթի մասին:

_____

_____

_____

_____

ՄԱՆՈՒԿՆ ՈՒ ՋՈՒՐԸ

Հովհաննես Թումանյան

Ամպոտ սարեն ուրախ ձենով
Ջուր է գալիս, անցնում շենով։
Մի թուխ մանուկ դուրս է վազել,
Ձեռքն ու երես պաղ լըվացել,
Լըվացել է ձեռքն ու երես,
Ու դարձել է՝ խոսել էսպես.

— Դու ո՞ր սարեն կուգաս ջըրի՛կ,
Իմ պաղ ջըրիկ ու անուշիկ։
— Ես էն սարեն կուգամ մըթին,
Որ հին ու նոր ձյունն է գլխին։

— Դու ո՞ր առուն կերթաս, ջըրի՛կ.
Իմ պաղ ջըրիկ ու անուշիկ։
— Ես էն առուն կերթամ զվարթ,
Ուր ափերն են շուշան ու վարդ։

— Դու ո՞ր այգին կերթաս, ջըրի՛կ.
Իմ պաղ ջըրիկ ու անուշիկ։
— Ես էն այգին կերթամ դալար,
Որ տերն է ժիր մեջն այգեպան։

Առաջադրանքներ

1.Բանաստեղծության մեջ ինչպիսի՞ն էին սարը, մանուկը, ջրիկը, այգեպանը, ձյունը:

——————————սար

——————————մանուկ

——————————ջրիկ

——————————այգեպան

——————————ձյուն

2.Բանաստեղծությունից դո՛ւրս գրիր առվին վերաբերող տողերը:

_____

_____

_____

_____

3.Ի՛նքդ հորինիր հեքիաթ ուրախ առվակի մասին, մուտքագրի՛ր:

«Աղայան-Ռոդարի» նախագիծ

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎԵՃԸ

Հովհաննես Թումանյան

Եզը, կովը և շունը վիճում էին միմյանց հետ և ամեն մեկը պնդում էր, թե՝ մեր տերը ամենից շատ ինձ է սիրում:

- Իհարկե նա ինձ ամենքիցդ շատ է սիրում,- ասում է եզը և գիտե՞ք ինչու համար: Նրա համար, որ ես եմ նրա արորն ու տափանը քաշում, ես եմ նրա համար անտառից փայտ բերում: Նա ինձ է լծում սայլին և իր ցորենը տանում ջաղաց, այնտեղ ալյուր շինում. հետո էլի ես եմ տանում քաղաք, ուր նա ծախում է այդ ալյուրը և իր տան համար առնտուր անում, երեխանց համար հագնելիք առնում: Ուրեմն, դուք ի՞նչ եք կարծում, ես որ չլինեի, նա ինչպե՞ս կարող էր ապրել:

- Այդ ճշմարիտ ես ասում,- ասաց կովը:- Բայց մեր տերն ինձ ամենքիցդ ավելի է սիրում, այդ նրա համար է, որ նա իմանում է, թե քեզ նման **աշխատասեր** ու **ժրաջան** եզնուկին ես եմ պահել մեծացրել:
Այս մեկ: Մեկ էլ որ՝ նրա գերդաստանը իմ կաթով եմ պահում: Այն մածունն ու կարագը, այն սերն ու կաթը, այն եղն ու պանիրը, այն տաք-տաք թանե սպասը, որ ամեն օր խպշտում են, ո՞ւմ տվածն է: Տեսնո՞ւմ եք ուրեմն, որ եթե ես չլինեմ, բոլորը **քաղցած** կկոտորվեն:
- Դու էլ ես **ճշմարիտ** ասում, սիրուն կովիկ,- սկսեց շունը:

- Ո՞վ կարող է ուրանալ քո **լավությունը:** Շատ անգամ ես ինքս էլ եմ մասնակից լինում քո տված անուշ թանին: Մեր տանտիկինը ամեն խնոցի

հարելիս թանիցն ինձ բաժին է տալիս: Ով որ քո լավությունն ուրանա, երկու աչքով կուրանա: Ես շատ երախտագետ եմ, ոչ ոքի լավությունը չեմ կարող ուրանալ: Բայց գիտեք ինչ կա: Դուք մի նեղանաք, որ մեր տերն ինձ ամենքիցդ էլ շատ է սիրում. դրա համար մեծ պատճառ կա և ահա ասեմ, թե ինչ է դրա պատճառը…

Եվ շունն սկսեց մեկ-մեկ հաշվել, թե ինքն ինչ ու ինչ է անում: Ասած է, շունը որ հաչել սկսի, էլ չի դադարիլ: Այնքան հաչեց եզան ու կովի հետ, որ տերն իմացավ, գնաց նրանց մոտ՝ ասելով. «Թող տուր դրանց, Բողար, դու չգիտե՞ս, որ ամենքդ էլ ինձ հարկավոր եք, ոչ մեկդ մյուսի արածը չեք կարող անել. այդ պատճառով էլ ես ամենքիդ էլ սիրում եմ, դուք էլ սիրեցեք միմյանց»:

Առաջադրանքներ

1. Դո՛ւրս գրիր անհասկանալի բառերն ու օնլայն բառարանի օգնությամբ բացատրի՛ր:

_____

_____

_____

2. Գտի՛ր ընդգծված բառերը և գրի՛ր դրանց հակառակ իմաստն ունեցող բառերը:

_____

_____

_____

3. Թվարկի՛ր առակի կենդանիներին, բնութագրի՛ր:

_____

_____

_____

_____

4. Ինչպիսի՞ մարդ է կենդանիների տերը: Ինչո՞ւ ես այդպես կարծում:

ՄԵՂՈՒՆ ՈՒ ՄԱՐԴԸ

Ղազարոս Աղայան

Մեղուն մեկ անգամ հարցրեց իր տիրոջը:

— Քո կենդանիներից ո՞րն է ամենից օգտակարը:

— Գիտեմ, դու երևի կարծում ես, թե ամենից օգտակարը դու ես, բայց սխալվում ես, - պատասխանեց տերը:

— Ինչպե՞ս, տեր, ո՞րն է այն կենդանին, որ ինձանից ավելի օգտակար է:

— Ոչխարը:

— Այդ հաշիվ չէ, տեր. ոչխարը իմ հասակակիցը չէ: Նա մի ահագին կենդանի է, իսկ ես մի միջատ եմ: Դու պետք է ինձ իմ ընկերների հետ համեմատես:

— Շատ բարի. շերամը քեզ պես փոքր է, բայց քեզանից շատ օգուտ է տալիս:

— Շերամը ո՞րն է:

— Շերամն այն իմաստուն որդն է, որ մեզ համար աննման քնքուշ մետաքս է շինում:

— Հա՜ , իմացա, այդ այն շատակեր ճիճուն չէ՞, որին անդադար կերակրում եք թթան տերևներով:

— Նա ինքն է:

— Բայց գիտե՞ս, տեր, նրա չափ, որ մեզ էլ կերակրեք, մենք մեղրի տեղ ոսկի կշինենք ձեզ համար: Դուք ոչ մի կենդանի չունեք, որ իր կերակուրը մեզ նման ինքը լինի շինելիս և ուրիշներին էլ բաժին լինի տալիս: Այնպես չէ՞, պարոնս:

— Այո, այդ կողմից դու ուղիղ ես . մենք դեպի ձեզ շատ ապերախտ ենք, որովհետև բոլորովին անխնամ ենք թողնում ձեզ…

Մեղուն ուրախացավ տիրոջ պատասխանիցը և թռավ նստեց վարդենու վրա:

Առաջադրանքներ

1.Դո՛ւրս գրիր անծանոթ բառերը, բացատրի՛ր օնլայն բառարանի օգնությամբ:

_____

_____

_____

2. Առակից գտի՛ր *ինչպիսի՞* հարցին պատասխանող բառեր, նրանց ավելացրո՛ւ *ի՞նչ* հարցին պատասխանող բառեր, ստացի՛ր նոր բառակապակցություններ:

_____

_____

_____

_____

_____

3.Ստացված բառակապակցություններով հորինի՛ր փոքրիկ պատում:

ՄԵԿ ԵՎ ՅՈԹ

Ջաննի Ռոդարի

Ես մի տղա գիտեի, որ յոթ տղա էր: Ապրում էր Հռոմում, անունը Պաոլո էր, նրա հայրը տրամվայի վարորդ էր: Նա նաև ապրում էր Փարիզում, անունը Ժան էր, և նրա հայրն էլ աշխատում էր ավտոմեքենաների գործարանում:
Նա նաև ապրում էր Բեռլինում, այնտեղ անունը Կուրտ էր, և նրա հայրը թավջութակի պրոֆեսոր էր:
Նա նաև ապրում էր Մոսկվայում, անունը Յուրի էր, ինչպես Գագարինինը, և նրա հայրը քարտաշ էր ու մաթեմատիկա էր սովորում:
Նա նաև ապրում էր Նյու Յորքում, անունը Ջիմմի էր, և նրա հայրը բենզին էր վաճառում:
Քանիսի՞ն թվեցի: Հինգին: Մնաց երկուսը:

Մեկի անունը Չու էր, ապրում էր Շանհայում, և նրա հայրը ձկնորս էր, վերջինի անունը Պաբլո էր, ապրում էր Բուենոս Այրեսում, նրա հայրն էլ ներկարար էր:
Պաոլոն, Ժանը, Կուրտը, Յուրին, Ջիմմին, Չուն և Պաբլոն յոթն էին, բայց միևնույն է՝ նույն տղան էին, որը ութ տարեկան էր, արդեն գրել- կարդալ գիտեր, և կարողանում էր հեծանիվ քշել՝ առանց ղեկը բռնելու:
Պաոլոն սևահեր էր, Ժանը՝ շիկահեր, իսկ Կուրտը շագանակագույն մազեր ուներ, բայց նրանք նույն երեխան էին: Յուրին ճերմակ մաշկ

ուներ, Չուի մաշկը դեղին էր, բայց նրանք նույն տղան էին: Պաբլոն իսպաներեն էր կինոնկարներ դիտում, Ջիմմին՝ անգլերեն, բայց նրանք նույն տղան էին և նույն լեզվով էին ծիծաղում:

Այժմ յոթն էլ մեծացել են և այլևս չեն կարող պատերազմել, որովհետև յոթն էլ նույն մարդն են:

ՄԵԿԻ ԵՎ ՅՈԹԻ ՄՈԼՈՐԱԿԸ

Առաջադրանքներ

1. Հեքիաթից դո՛ւրս գրիր յոթ հերոսների անունները:

_____

_____

_____

2. Գրի՛ր քո ընկերներից յոթի անունները:

_____

_____

_____

3. Օգտվի՛ր Google որոնողական հարթակից, գտի՛ր և լրացրո՛ւ նշված երկրների մայրաքաղաքները:

Հայաստան _____

Հունաստան _____

Ռուսաստանի Դաշնություն _____

Ֆրանսիա _____

Իտալիա _____

ԱՉՔԵՐԻ ԳԱՆԳԱՏԸ

Ջաննի Ռոդարի

Գիտե՞ք, որ աչքերն էլ են **զանգատվում:** Չե՞ք հավատում: Մի անգամ իմ բախտը բերեց, ես կարողացա լսել, թե ինչպես են նրանք բողոքում:

— Ոչ ոք չգիտի, - ասում էր նա, -թե ի՛նչ **թշվառ** եմ ես: Արդեն մի քանի դար է, ինչ իմ կյանքը **անտանելի** է դարձել: Ես միշտ տեսնում էի, որ Արեգակը պտտվում է Երկրի շուրջը: Բայց **հայտնվեցին** Կոպերնիկոսն ու Գալիլեյը և **ապացուցեցին**, որ ես սխալվում եմ, ամեն ինչ հակառակն է՝ Երկի՛րն է պտտվում Արեգակի շուրջը:

Նայում էի ես ջրի մեջ և տեսնում, որ նա **մաքուր** է և թափանցիկ: Բայց հայտնվեց մի հոլանդացի Լևենգուկ, **ստեղծեց** մանրադիտակը և հայտարարեց, որ մի կաթիլ ջրում ավելի շատ կենդանի **էակ** կա քան **գազանանոցում**:

Հիմա էլ, տես, գիշերը նայում եմ երկնքին, ա՛յ այնտեղ՝ վերև: Երկինքը սև է, ինչպես կասկածներն են լինում: Ամեն ինչ ինձ համար պարզ է, ախր ես **հրաշալի** տեսողություն ունեմ: Բայց ստացվում է, որ ես էլի սխալվում եմ: Ինձ մոտեցնում են աստղադիտակին, որն ուղղված էր դեպի երկինք, և հանկարծ ես տեսնում եմ, որ այնտեղ միլիոնավոր աստղեր կան: Այնպես որ հիմա, ուզեմ թե չուզեմ, ապացուցված է, որ ես ամեն ինչ սխալ եմ տեսնում: Երևի ավելի կլինի, որ ես անցնեմ թոշակի:

Առաջադրանքներ

1. Գտի՛ր նշված բառերին իմաստով մոտ բառերը:

_____

_____

_____

_____

_____

2.Ինքդ հորինի՛ր:

«Ականջների գանգատը»

_____

_____

_____

_____

_____

_____

ՑԱՎԻՑ ԷԼ ՕԳՈՒՏ ԿԱ՞

Տեղեկատվական տեքստ

Բոլորս մտածում ենք՝ ի՞նչ լավ կլիներ, եթե ցավ չլիներ։

Պարզվում է, որ այնքան էլ լավ չէր լինի։

Մի անգամ բժշկի մոտ մի անսովոր հիվանդի էին բերել. նա երբեք ցավ չէր զգացել։ Բռնել էր տաք թավան, վառել էր ձեռքը ու ոչինչ չէր զգացել։ Սուր դանակով ձեռքն էր կտրել, ասեղով՝ մատը ծակել։

Ցավ չզգալու պատճառով նրա մարմինը անպաշտպան էր մնացել։

Տաք իրի դիպչելիս՝ քաշում ես ձեռքդ, ճի՞շտ է։

Ոտքդ սուր քարի դիպչելիս՝ ցավում է, ու դու անմիջապես քաշում ես այն։

Ցավը զգուշացնում է, որ պաշտպանես ինքդ քեզ։

Առաջադրանքներ

1. Թվարկի՛ր մարդու զգայարանները։

_____

_____

2. Պատմի՛ր մարդու զգայարաններից մեկի մասին։

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Ի՞ՆՉ ԴԺՎԱՐ Է ԹՌՉԵԼԸ

Տեղեկատվական տեքստ

Մարդը միշտ երազել է թռչել: Քանի որ թևեր չի ունեցել, փորձել է թռչել սարքերի միջոցով:

Թռչող մեքենաների առաջին գծագրերը կատարել է իտալացի մեծ նկարիչ, գիտնական Լեոնարդո դա Վինչին՝ մոտ 500 տարի առաջ: Բայց թռչող մեքենա ստեղծելը այնքան էլ հեշտ գործ չէր:

110 տարի առաջ մի ռուս զինվորական ստեղծեց առաջին թռչող սարքը: Այն բավականին նման էր ժամանակակից ինքնաթիռին, բայց շատ-շատ թերություններ ուներ: Առաջին ինքնաթիռը գետնից բարձրացավ, թեքվեց կողքի և կոտրեց թևը:

Դրանից հետո տարբեր երկրներում մարդիկ շարունակեցին թևավոր մեքենաներ ստեղծելու փորձերը:

90 տարի առաջ ամերիկացիների ստեղծած ինքնաթիռը օդ բարձրացավ, անցավ 32մ: Առաջին թռիչքը տևեց մի քանի վայրկյան: Դա իսկական թռիչք էր՝ վերելքով ու վայրէջքով: Հետագայում ինքնաթիռներն անընդհատ կատարելագործվեցին:

Առաջադրանքներ

1.Ի՞նչ կարող ես պատմել ժամանակակից ինքնաթիռների մասին։

_____

_____

_____

_____

_____

2. Նկարի՛ր քո երազանքների ինքնաթիռը։

ԱՎՏՈՄՈԲԻԼ

Տեղեկատվական տեքստ

Թվում է, թե անիվից պարզ ոչինչ չկա։ Բայց անիվը մարդու ամենամեծ հայտնագործություններից է։

Մարդը անիվով սայլ ստեղծեց, այդ սայլին ձի կամ ուրիշ կենդանի լծեց։ Բայց մարդիկ երազում էին այնպիսի սայլ ունենալ, որ ինքն իրեն շարժվեր։

Մոտ 230 տարի առաջ մի ֆրանսիացի ձիերի փոխարեն սայլին մեքենա լցեծ։ Այդ մեքենան գոլորշիով էր աշխատում։ Հենց մեքենայի կաթսայի գոլորշին վերջանում էր, սայլը կանգնում էր։ Մարդն իր ստեղծածը ավտոմոբիլ անվանեց, որ նշանակում է ինքն իրեն շարժվող։

Կազմողներ՝

Արմինե Մնացականյան

Լիլիթ Սահակյան

Հասմիկ Ղազարյան

Տաթև Սահակյան

Աղբյուրներ՝

Պետրոսյան Աիդա, Մատենիկ 2, 1995

Սիմոնյան Մարիետ, Պետրոսյան Աիդա, Ընթերցարան, 1997

«Տիգրան Հայրապետյան» գրադարան

lib.mskh.am

2022 թվական